«Գործազուրկների զբաղվածության ապահովման միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--------- ---------- 2022 թվականի N - L

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. հաստատել գործազուրկների զբաղվածության ապահովման միջոցառումը՝ համաձայն հավելվածի։
2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

- սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ սույն որոշումից բխող փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ.
- մինչև 2023 թվականի փետրվարի 15-ն իրականացնել 2022 թվականին միջոցառման իրականացման ընթացիկ գնահատում: Գնահատման արդյունքում միջոցառման միջոցով զբաղված դարձած անձանց տեսակարար կշիռը շահառուների նախատեսված թվում 70 տոկոսից բարձր լինելու պարագայում միջոցառման իրականացման նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեում.
- 2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակում իրականացնել 2022 թվականին միջոցառման իրականացման վերջնական գնահատում: Կայուն զբաղվածության չափանիշը 50 տոկոսից բարձր լինելու դեպքում միջոցառումը դարձնել զբաղվածության պետական ծրագիր։

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի

« » « » -ի N -Լ որոշման

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

1. **ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

1. Միջոցառման նպատակն է մեծացնել գործազուրկի, այդ թվում՝ ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքի գործազուրկ անդամի (այսուհետ՝ նպաստառու գործազուրկ) աշխատանքի տեղավորման հնարավորությունները և նպաստել նրա ընտանիքի աղքատության հաղթահարմանը։
2. Միջոցառման մասին տեղեկատվությունն արտացոլվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) պաշտոնական (https://socservice.am) կայքէջում: Ծառայության տարածքային կենտրոնը (այսուհետ՝ տարածքային կենտռրոն) տեղեկատվությունը տեղադրում է իր գտնվելու վայրում՝ տեսանելի տեղում, ինչպես նաև տարածում՝ զանգվածային լրատվության միջոցների և հնարավոր այլ իրազեկման աղբյուրների միջոցով։
3. Միջոցառման շրջանակում միանվագ փոխհատուցում է տրամադրվում այն իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ գործատու), որն առնվազն մեկ տարի, իսկ սեզոնային աշխատանքի դեպքում՝ 12 ամիս ժամկետով, նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիր է կնքում այն գործազուրկի հետ, որը մինչև սույն միջոցառման շրջանակներում աշխատանքի ընդունվելը «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգում» առկա տեղեկատվության հիման վրա վերջին երեք ամսվա ընթացքում չի հանդիսացել հարկ վճարող։
4. Միջոցառման շրջանակներում աշխատանքի ընդունած յուրաքանչյուր գործազուրկի համար գործատուին վճարվում է միանվագ փոխհատուցում 250.0 հազար դրամի չափով, իսկ նպաստառու գործազուրկի համար՝ 300.0 հազար դրամի չափով։

1. **ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

5. Միջոցառման շրջանակներում փոխհատուցում ստանալու նպատակով գործատուն ծառայության պաշտոնական կայքէջի միջոցով լրացնում է առցանց դիմում՝ կցելով համապատասխան աշխատանքային պայմանագիրը և մուտքագրում աշխատանքի ընդունվող անձի հանրային ծառայության համարանիշը։ Գործատուի դիմումը ընդունվում է համակարգի կողմից միայն այն դեպքում, երբ հաստատվում է, որ աշխատանքի ընդունվող անձը գործազուրկ է (նպաստառու գործազուրկ է) և համապատասխանում է սույն միջոցառման 3-րդ կետով նախատեսված չափանիշներին։
6. Գործատուի էլեկտրոնային դիմումն ընդունվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ծառայությունը միանվագ փոխհատուցումը տրամադրում է գործատուին՝ նրա բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով։

7. Միջոցառման շրջանակներում գործատուին տրամադրված միանվագ փոխհատուցման գումարը ենթակա է վերադարձման՝

1) գործատուի կողմից, եթե նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիրը լուծվում է գործատուի նախաձեռնությամբ՝ մինչև մեկ տարին լրանալը, իսկ սեզոնային աշխատանքով ապահովման դեպքում՝ մինչև տվյալ գործատուի մոտ աշխատած ժամանակահատվածի 12 ամիսը լրանալը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ կետերով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված հիմքերով լուծման դեպքերի.

2) գործազուրկի (բացառությամբ հաշմանդամություն ունեցող անձի) կողմից, եթե նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիրը լուծվել է իր նախաձեռնությամբ՝ մինչև մեկ տարին լրանալը, իսկ սեզոնային աշխատանքով ապահովման դեպքում՝ մինչև տվյալ գործատուի մոտ աշխատած ժամանակահատվածի 12 ամիսը լրանալը.

3) գործատուի և գործազուրկի (բացառությամբ հաշմանդամություն ունեցող անձի) կողմից հավասարապես, եթե նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատանքային պայմանագրի կողմերի համաձայնությամբ՝ մինչև մեկ տարին լրանալը, իսկ սեզոնային աշխատանքով ապահովման դեպքում՝ մինչև տվյալ գործատուի մոտ աշխատած ժամանակահատվածի 12 ամիսը լրանալը:

8. Միջոցառմամբ սահմանված ժամկետից՝ մեկ տարուց շուտ աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուի կամ գործազուրկի կողմից վերադարձման ենթակա գումարի չափը հաշվարկվում է՝ գործատուին տրամադրված միանվագ փոխհատուցման գումարը բաժանելով 12-ի և բազմապատկելով դեռևս չաշխատած կամ ոչ լրիվ աշխատած ամիսների թվով:
9. Տարածքային կենտրոնը եռամսյակը մեկ անգամ իրականացնում է գործազուրկների զբաղվածության ապահովման միջոցառման կատարման ընթացքի մոնիթորինգ:
10. Միջոցառման ընթացիկ գնահատումն իրականացվում է աշխատանքի տեղավորման չափանիշի հիման վրա, որը հաշվարկվում է հետևյալ ձևով.

$S_{չ}$ =

Տչ -ն՝ աշխատանքի տեղավորման չափանիշն է,

Ը-ն՝ տվյալ պահին նախորդող մեկ տարվա ընթացքում միջոցառման միջոցով աշխատանքի տեղավորված անձանց թիվն է,

Ա-ն՝ տվյալ պահին նախորդող մեկ տարվա ընթացքում միջոցառման միջոցով աշխատանքի տեղավորված անձանցից՝ գործատուին միանվագ փոխհատուցումը տրամադրելուց հետո աշխատանքից ազատվածների թիվն է տվյալ պահի դրությամբ:

11. Միջոցառման վերջնական գնահատման համար հիմք է հանդիսանում կայուն զբաղվածության չափանիշը, որը հաշվարկվում է հետևյալ ձևով.

$$Զ_{կչ} = \frac{Ը - (Ա - Ա_{տ})}{Ը} \times 100\%$$

Զկչ-ն՝ կայուն զբաղվածության չափանիշն է,

Ը-ն՝ տվյալ տարվա ընթացքում միջոցառման միջոցով աշխատանքի տեղավորված անձանց թիվն է,

Ա-ն՝ տվյալ տարվա ընթացքում միջոցառման միջոցով աշխատանքի տեղավորված անձանցից՝ գործատուին միանվագ փոխհատուցումը տրամադրելուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թիվն է,

Ատ-ն՝ գործատուին միանվագ փոխհատուցումը տրամադրելուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատված անձանցից՝ աշխատանքից ազատվելուց հետո մեկամսյա ժամկետում աշխատանքի տեղավորված անձանց թիվն է: